

## Պատերազմի ամպեր »Սև Այգու« վրա ?

Եվրոտեսիլի ժամանակ նրանք ելույթ ունեցան միասին, սակայն իրականում Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունները, երկրներ որոնց աշխարհաքաղաքական դիրքը Հարավային Կովկասում մեծ ստրատեգիական նշանակություն ունի Եվրոպայի համար , այնքան էլ հաջող չեն: Քրիստոնյա հայերի և մահմեդական, թրքախոս ազերիներին բաժանող ջուրը խորն է, շատ խորը:

Դա ևս մեկ անգամ պարզ դարձավ մայիս ամսին կազմակերպված միջազգային կոնֆերենցիայի ընթացքում, որը նվիրված էր երկու երկրների հարաբերությունները խոչընդոտող գալթակողության քարին՝ Ադրբեջանում գտնվող հայկական Ղարաբաղի կարգավիճակին, որը ուղիղ քսան տարի առաջ դիմել էր Մոսկվային նախկին Հայաստանի Սովետական Հանրապետությանը միանալու խնդրանքով : Չայրացած ազերիները Ադրբեջանի տարբեր քաղաքներում հայկական փոքրամասնությունների արյունը հեղեղեցին: Խորհրդային Միության փլուզումից հետո Բաքուն փորձ ձեռնարկեց Լեռնային Ղարաբաղի անկախության ձգտումները արմատախիլ անել: Արյունալի պատերազմը տասնյակ հազարավոր մարդկանց կյանք խլեց: Հայերի օգնությամբ, Ղարաբաղի հայերը 1994 թ.ին կարողացան հաղթանակ տանել և հարձակողական դիրքեր գրավել Ադրբեջանում, ստեղծելով անվտանգության գոտի: Իրականում ոչ ոք չի ճանաչում այդ 4.400 km տարածությամբ երկրորդ հայկական պետության անկախությունը: Հյուսիսային Օսեթիայի և Աբխազիայի հետ միասին Ղարաբաղը լրացնում է այսպես կոչված սառեցրած հակամարտությունների ցուցակը: Միջազգային հանրությունը փորձում է լուծում գտնել հայկական Ղարաբաղի և Ադրբեջանի տարածքային ամբողջականության վերաբերյալ պահանջների դիլեմայի համար:

Միևնույն ժամանակ անդամներ Ռուսաստանը, ԱՄՆ-ը և Ֆրանսիան ցանկանում են, որ կողմերը փոխզիջման գնան: Մշտական հարցերը պտտվում են փակուղում: Արդյոք կլքեն Ղարաբաղի հայերը գրավված տարածքները, երբ և ինչպես ազերի փախստականները կարող են ետ վերադառնալ, որոնք են Ղարաբաղում անցկացվող հանրաքվեի նախապայմանները և կարող է արդյոք Բաքուն ընդունել, որ դա կարող է »երկրորդ հայկական պետության« ստեղծման պատճառ դառնալ: Այս հարցերի շուրջ արդեն մի քանի տարի է բանակցություններ են տարվում, սակայն առանց հաջողության:

### *Սկաններ*

Բաքուն վերջին մի քանի ամիսների ընթացքում իր մկաններն է ցուցադրում: Կասպից Ծովի հարուստ, նավթային պետությունը հետզհետե մեծացնում է իր ռազմական ծախսերի ծավալը ( Հայաստանից հինգ անգամ ավելի շատ): Մարտին, 1994թ.-ից սկսված, առաջին կատաղի ընդհարումը տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև: Ինչ էր դա, Բաքվի նպատակների նախնական փորձ?:

Այդ դեպքում դա ազերիներին չհաջողվեց, քանի որ մի քանի ժամ հետո ստիպված էին զիջել գրավված դիրքերը: Ղարաբաղի հայերը կայուն են մինչև արյան վերջին կաթիլը պայքարելու իրենց որոշման մեջ: Այդ հողակտորը նրանք »Սուրբ Հայկական հող« են համարում: Դա առաջին անգամն է 1915 թ.ի Օտոմանյան իշխանությունների կողմից հայ ազգի սպանություններից հետո, երբ կոտրված հայերը կարողացան թուրքերին(ինչպես նրանք ազերիներին են անվանում )ստիպել պաշտպանական դիրք ընդունել: Միևնույն ժամանակ Ղարաբաղը անկախության միջազգային ճանաչման իր երազանքն է փայփայում: Կամ ինչպես Ղարաբաղի երիտասարդ և արժանավայել արտաքին գործերի նախարարի տեղակալ Էդուարդ Աթանեսյանն է ասում. »Եթե նույնիսկ մոտակա քսան տարների ընթացքում աշխարհը մեզ չճանաչի, միևնույն է մենք հաստատուն կմնանք մեր նպատակներում«:

Հաշտության հնարավորության հույսեր չկան: Ադրբեջանի տարածքում ինքնավարության միտքը հայերի համար անընդունելի է: »Թուրքերի« հանդեպ ունեցած անվստահությունը շատ մեծ է: Եվրոպայում կամ Լյուքսեմբուրգում գործող ռեզիդենտ համագործակցության մոդելի կիրառումը դեռ հնարավոր չէ: Առաջին հերթին պետք է ազգային խնդրի , որոշված սահմանների և սեփական ժողովրդի անվտանգության ապահովման հարցերը լուծում ստանան: Իսկ ընթացքում պատերազմի ամպեր են կուտակվում: Եթե պատերազմ սկսվի, ապա դա մինչև 2012 թ.-ը կլինի, երբ Բաքվի նավթից ստացվող եկամուտները կնվազեն և նա չի կարողանա արդեն մեծ գումարներ հատկացնել ռազմամթերքի ձեռք բերմանը: Արդյունքում դիվանագիտությունը պետք է մասնակցի խաղաղությունը պահպանելու համար ժամանակի դեմ մրցավազքին: